

պատասխանը:

Աստուած, Աստուածամարդ և մարդ. ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք. քրիստոնէական աշխարհահայեցք, քրիստոնէական իդէալ և ինքնաճանաչողութիւն. քրիստոնէական բարոյականութեան լուսով—ահա կեանքի Գրքի կենդանարար հոգին, որ բովանդակում է իւր մէջ կատարելապէս որոշ պատասխան կեանքի երեք գլխաւոր հարցերի. «ինչ է ճշմարտութիւնը», «ինչպէս պէտք է բանական կեանք վարել» և «ինչ պէտք է անել կեանքը բարեփոխելու համար»:

Մամբրէ վարդապետ

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

19-րդ դարի ռուս կուսակցոն հոգեւորականութեան մէջ իւր ընդունակութեամբ և բեղմնաւոր գործունէութեամբ խիստ աչքի ընկնող տեղ էր գրաւում Կիեւի մետրոպոլիտ, հանդուցեալ Պլատոն արքեպիսկոպոսը: Նրա ծննդեան հարիւրամեակի առթիւ «Եկեղ. համբաւաբեր» շաբաթաթերթը եկեղեցական այդ գործչի մասին հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում: Հանդուցեալը ծնունդ է 1803 թ. մայիսի 2-ին և վախճանուել 1891 թուի հոկտեմբերի 1-ին: Նա իւր սկզբնական կրթութիւնը ստացել է Տվերի հոգեւոր դպրանոցում, իսկ աստուածաբանական բարձր կրթութիւնը Ս. Պետերբուրգի Հոգ. ձեմարանում, որի լիակատար դասընթացքը փալլուն յաջողութեամբ 1827 թ. աւարտելով, արժանանում է մագիստրոսութեան գիտնական աստիճանին: Նոյն թուին հանդուցեալը հրաւիրուում է Օրլովի հոգ.

գլխաւորութեամբ կրօնական առարկաների ուսուցիչ, ապա 1829 թուին տեղափոխուում է Ս. Պետերբուրգի Հոգ. ձեմարանը՝ բարոյական աստուածաբանութիւն դասախօսելու համար: 1830 թ.-ին ընդունուում է կուսակրօն հոգեւորականութեան մէջ: 1831 թ.-ից մինչև 1837 թ. վարում է Ս. Պետերբուրգի Հոգ. ձեմարանում տեսչութեան պաշտօնը, ապա 1837 թ. ստանձնում է Կոստրոմայի հոգ. գլխաւորութեան վերատեսչութիւնը: 1843 թ. եպիսկոպոս ձեռնադրուելով, թողնում է մանկավարժական ասպարէզը և նուիրուում եկեղեցական—վարչական գործերին: 1850 թուին ստանում է արքեպիսկոպոսի տիտղոսը, վարում է մի քանի թեմերում թեմակալ առաջնորդի պաշտօնը և ամէնից վերջը՝ 1882 թուին կարգուում է Կիեւի մետրապոլիտ, որտեղ և կնքում է իւր մահկանացուն:

Վերոյիշեալ շաբաթաթերթը այս կենսադրական տեղեկութիւններն առաջ բերելուց յետոյ, մեծ գովասանքով է խօսում հանգուցեալի մասին և համարում է նրան պրավոսլաւ եկեղեցու նշանաւոր սիւներից մէկը: Նա, իբրև թեմակալ առաջնորդ, արեւմտեան Ռուսաստանում մեծ աշխատանք է գործ դրել էսթերին և Լաթիշներին պրավոսլաւ եկեղեցու գիրկը մտցնելու համար: Հարաւային Ռուսաստանում, իբրև քաջ և արթուն հովիւ, կռուել է զանազան աղանդների, յատկապէս Կիեւում և շրջակայքում բուն գրած Շտունդիստների դէմ: Պլատոն մետրապոլիտը յայտնի է նաև գիտնական աշխարհին իւր մի քանի աստուածաբանական երկերով, բայց առաւելապէս իւր հրատարակած մի շարք բարոյների ժողովածուով, որ ծառայում է իբրև ձեռնարկ գիւղական բահանաների համար:

— Քուլթայիսից «Եկեղ. Համբաւաբեր»-ին ուղղած մի թղթակցութիւն պատմում է, որ մեծ պատին այնտեղ տեղական հոգ. գլխաւորութեան տեսուչը կարգացել է երկու դասախօսութիւն կրօնական—բարոյական բովանդակութեամբ: Հայր դասախօսը շօշափել է նաև ժամանակակից հարցեր, որոնք, թղթակցի կարծիքով, մեծ նշանակութիւն ունին օրթոդոքս եկեղեցու ներկայ դրութիւնը բարելաւելու համար: Գասախօսութիւններին հետեւել է եկեղեցական համերգ հոգ. գլխաւորութեան մասնակցութեամբ:

— «Եկեղ. Համբաւաբեր»-ի № 19-ի մէջ տպուած է երկու բարձրագոյն հրովարտակ — մէկը տրուած յանուն Տոմսկի եպիսկոպոս Մակարիյին, որին ի տրիտուր իւր արդիւնաւէտ ծառայութեան շնորհուում է ագամանդեայ վեղարի խաչ, իսկ միւսը Տաւրիկեան եպիսկոպոս Նիկոլային, որով շնորհուում է

նրան ու Աղէքսանդր Նեվսկու շքանշանը:

— Ապրիլի 10—15-ին Պետերբուրգում, Գիտութեանց Կայսերական ձեմարանի դահլիճում՝ դումարուել է սլաւոնագէտների նախապատրաստական ժողովը: Ժողովը, ի միջի այլ խնդիրների, զբաղուել է նաև սլաւոներէն համարաբանի, եկեղեցական—սլաւոներէն բառարանի և հին սլաւոներէն Աստուածաշնչի թարգմանութեան ու հրատարակութեան խնդրով:

— «Եկեղ. Համբաւաբեր»-ը, խօսելով Քիշնևում կատարուած անկարգութիւնների մասին, հետեւեալն է ասում. «Քիշնևում տեղի ունեցած անկարգութեանց պատճառը, որի ժամանակ շատերը հրէաներից սպանուեցին, կողոպտուեցին և աւարառութեան ենթարկուեցին, պարզուած է: Անկարգութիւնները ոչ այլ ինչ են, բայց եթէ հետեանք այն սուր և թշնամական յարաբերութեան, որ կար քրիստոնեայ և հրէայ ընտելութեանց մէջ»: Ասլա աւարկում է. «Այդպիսի յարաբերութեան ժամանակ իւրաքանչիւր մի զայրոյթ պատճառող լուր հրէաների մասին կարող էր պատճառ դառնալ, որ անկարգութիւնը բռնիուէր: Անկարգութիւնները շարունակուել են երկու օր, այն է՝ ապրիլի 6—7»:

— Զատիկի տօնին Քիշնևում տեղի ունեցած սոսկալի այդ դէպքը, որով աներևակայելի խժդժութիւններ գործուեցան Հրէայ ազգաբնակչութեան դէմ, ի միջի այլոց Լ. Յովհան Արօնշրատսկուն ստիպեց իւր հեղինակաւոր ձայնը բարձրացնել և հետեւալ՝ բաղմամբիւ թերթերում լոյս տեսած՝ թղթակցութեամբ յայտնել իւր վիշտը:

«Արդացի լրագիրներից մէկի մէջ այն լուրը, որ վերաբերում էր Քիշնևում քրիստոնեաների կողմից հրէաներին պատճառած զրկանքներին, ծեծին, սպանութիւններին, տներ և խանութներ քանդելուն, և չկարողացայ այդ արտաքոյ կարգի դէպքը հասկանալ: Յիշում եմ, որ նման դէպք եղել էր 1881 թ.-ին Ռուսաստանի հարաւային մասում և կորստաբեր զուարճութիւնների ու մոլորութիւնների հետեանք էր: Իսկ այժմ ի՞նչն է պատճառը, որ քրիստոնեայ ուռն ժողովուրդը մի այսպիսի խելադար դործ է կատարում, մինչ նա ընդհանրապէս իւր պարզութեամբ և բարութեամբ աչքի է ընկել: Այնքան նկատուում է, որ դրո՛սից մի աղղեցութիւն է եղել, որ չարամիտ մարդիկ մեր ժողովրդին այդպիսի մի չեղած պատուհասի են դրդել: Թագաւորի օրտըր, որ լի է ժողովրդի ընդհանուր բարեկեցութեան և հանգստութեան, պետական կեանքի կանոնաւոր ընթացքի համար տարած հոգսերով, ա-

ռանձնապէս ցաւում է այս արիւնալի և սարսափելի եղելութեան համար: Եւ երբ է այդ պատահել: Զատիկ շաբթին, երբ երկնային և երկրային բոլոր բանական արարածները—հրեշտակներ և հաւատացեալ քրիստոնեաներ, ուրախանում են, որ Քրիստոս յարութիւն է առել, որ զաւմբողջ մարդկային ազգի ընդհանուր յարութեան սկիզբն է: Ինչպիսի՜ անմիա և անհառկանալի վերաբերմունք դէպի քրիստոնէական տոնամեծ տօնը, ինչպիսի՜ բթամտութիւն ուռւ մարդոց կողմից, ինչպիսի՜ անհաւատութիւն, ինչպիսի՜ մոլորութիւն: Քրիստոնէական տօնի լիովարէն նոքա սատանայի համար ստոր և մահառիթ տօն են սարքել՝ երկիրը, կարծես, դժոխք դարձնելով: Միթէ՞ քրիստոնեաները այդ են ուսել Քրիստոսից, իրենց երկնաւոր Վարդապետից, որ հեղ և խոնարհ սիրտ ունի, որ ջախջախեալ եղէզը փշրել և առկայծեալ պատրոյզը շիջուցանել չի կամենում (Մատթ. 12, 20),—այսինքն վշտահար և խոնարհ սրտերը չի կոտրում, հաւատով և ապաշխարութեամբ առկայծեալ հոգին չի հանդցնում՝ չի թոյլ տալիս, որ մեռնի, մինչև իւր ապաշխարութիւնը չլերջացնէ:

Ո՞րքա ժողովուրդ, եղբայրներ, ի՞նչ էք անում, ինչո՞ւ դուք բարբարոսներ, չարագործներ և աւազակներ էք դարձել այն մարդոց համար, որոնք ձեզ հետ մի հայրենիքի մէջ են ապրում, մի ուռւ թաղաւորի և նորանից կարգուած կառավարիչների հովանու և իշխանութեան ներքոյ: Ինչո՞ւ կորստաբեր ինքնագլխութիւն, արիւնալի, աւազակային վարմունք թոյլ տուիք ձեզ՝ ձեր նմանութիւնը ունեցող մարդկանց նկատմամբ: Դուք մոռացել էք ձեր քրիստոնէական կոչումը և Քրիստոսի խօսքերը. «Ուսարիւք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւք» (Մատթ. 11, 29): Լսեցէ՛ք, ինչպէս էր նա իւր աշակերտներին խոնարհութիւն և բարութիւն ուսուցանում:—Մէկ անգամ, երբ Յիսուս ուղում էր Երուսաղէմ երթալ, «առաքեաց հրեշտակս առաջի երեսաց իւրոց, և իբրև չոգան՝ մօին ի գիւղ մի սամարացւոց պատրաստել ինչ նմա: Եւ ոչ ընկալան զնա, զի դէմ եղեալ էր նորա երթալ յԵրուսաղէմ: Իբրև տեսնն աշակերտքն Յակովբոս և Յովհաննէս, ասեն. Տէր, կամի՞ս զի ասացուք, և իջցէ հուր յերկնից և սատակեսցէ զնոսա, որպէս և Եղիա արար: Դարձաւ սաստեաց ի նոսա և ասէ. Ոչ, դիտէ՛ք՝ որոյ հոգւոյ էք գութ: Զի Որդի մարդոյ ո՛չ եկն զդիս մարդկան կորուսանել, այլ կեցուցանել. և գնացին յայլ գիւղ»:—Ահա ինչպիսի վարք պէտք է ունենայ քրիստոնեան, ահա ինչպիսի՜ հոգի պէտք է ունենայ: Քիշինեցին երբ ի՞նչպիսի և ո՞ւմ հոգին ցոյց տուին հրէաների նկատմամբ:

Սատանայի հոգին — իսկ ով Քրիստոսի հոգին չունի՝ հոգի հեղու-
թեան, խոնարհութեան, համբերութեան, իշխանութեան հնա-
զանդութեան, սա չի՝ նորա. (Հռովմ. 29.) Նա Քրիստոսի չէ՝
այլ սատանայի ծառայ է և նման բաժին էլ կժառանգէ։ Յա-
կովբոս և Յովհաննէս աշակերտները առ Տէրն ունեցած նախան-
ձից և առ նա ունեցած սիրուց դրդուած ցանկութիւն յայանե-
ցին երկնային հրով ոչնչացնելու Սամարացիներին, սակայն Տէրը
այս բանը խտրել արգելեց։ Ո՛հ, ինչպիսի՜ խոտութեամբ նա կար-
գելէր Քիչինէի չարադործներին՝ իրենց քաղաքացի հրէաներին ջար-
գել և քարաքանդ անել նոցա բնակութիւնները։ Իմացէ՛ք, ռուս
եղբայրներ, ում հոգին ունիք։ Ոչ ոքին մի՛ նեղէք՝ ոչինչ բանի հա-
մար։ «Սիրեցէ՛ք եւ զթշնամիս ձեր, բարի՛ արարէք ատելեաց ձե-
րոց, օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր և աղօթս արարէք ի վերայ այնոցիկ,
որք լիկենն զձեզ և հալածեն» (Մատթ. 5, 44)։ Ահա իմ համառօտ
և աւետարանական խօսքերը ձեզ, ռուս եղբայրներ, հրէաների և
նոցա ամէն բանի մէջ անմեղ երեսաների նկատմամբ։ Ձեր կա-
տարած արիւնալի վարմունքի առթիւ»։

— Հայր Յովհան Կրօնշտադսկին իւր հետևողն ունեցաւ յան-
ձին ժիտովրի առաջնորդ սրբ. Անտոնիյ եպիսկոպոսի, որ արդէն
Աստուծոյ տաճարի բեմից է պաշտպանուած Քիչինէում որբացած
երեսաներին, սգոյ շղարշով պատած հրէայ ազգաբնակութեան։
Նա ասում է.

«Այն ժամանակ, երբ որբազան տաճարներում լսում էք
«սիրեցէ՛ք զթշնամիս ձեր» խօսքերը, երբ քրիստոնեայ ժողովուր-
դը Յարութեան աւետիսն էր լսում եկեղեցու բեմից, միլիոնա-
ւոր բերաններ «Քրիստոս յարեաւ» էին կոչում. — այդ տաճարների
պատերի ետև գինովցած, գազանացած ռուս ամբօխը հրէական
տներն է խուժում, կայքը և դոյքը աւարում, չարչարում մարդ-
կանց՝ չխնայելով ծերին և երեխային։ Անպատուում են կա-
նանց, կրծքի երեսաներին յօշոտում մայրերի աչքի առաջ և նո-
ցա դիակները ուրիշ բաների հետ պատուհաններից ցած նետում.
Իսկ ցածում ընչաքաղց ամբօխը յափշտակում է, թալանում է
այդ բալորը — թանկագին տօնական հագուստներ, արդուզարդեր,
թալանում է ինչ որ գտնում է. թալանում է աչքերը ա-
րիւն առած և չէ նկատում, որ այդ արդուզարդերը ներկուած
են անմեղ դոհերի վարդազոյն արիւնով... Տէր Աստուած, ինչ-
պէ՞ս ես համբերում, ինչպէ՞ս ես թոյլ տալիս, որ Քեզանից հա-
ղար հաղար անգամ լարերարուած մարդիկ այսօր Քո այդ
շնորհները բանի տեղ չը դնելով, օրուայ վսեմութիւնից անդամ
չզարհուրելով՝ անխնայ կոտորած անեն, ինչպէ՞ս կատաղի փոթո-

ընկը անտառում անխտիր ջարդում է թէ հարիւրամեայ կաղ-
նինները, թէ 10 ամեայ մատաղ ծառը, և Դու այդ ամէնը տես-
նելով լուռ և անվրդով դիտում ես. իսկ մենք այդ դաղանացած
ամբոխի հաւատակիցներու, եղբայրներս, «Քրիստոս ի մէջ մեր
յայտնեցաւ» ենք երգում՝ աւելի հանգիստ, աւելի ուրախ, երբ
փողոցների, մայթերի յատակները ոպանդանոցի յատակներն են
յիշեցնում, երբ անպաշտպան մայրերի լացն ու աղաղակը, սպա-
նուող երեխաների աղէկտուր տնքոցները—Բեթղէհէմի կոտորածն
են յիշեցնում, երբ «կորչեն ջհուտները» աղաղակող մարդ—գաղան-
ները հաստ փայտերը, սառն զէնքերը ձեռքերին Բարդուղիմեան
գիշերն են յիշեցնում»։—Սրբազանը մարգարէութիւններից օրինակ-
ներ բերելով ցոյց է տալիս, որ հրէայ ժողովուրդը միշտ Աստու-
ծոյ ընտրեալ ժողովուրդն է եղել, միշտ վայելել է նորա բարեք-
ները, Հրէայ ժողովուրդը մի այնպիսի հաւատով է զիմել ամէն
անգամ և շարունակում է զիմել այսօր միակ Աստծուն, մի այն-
պիսի քնքշութեամբ է պահում հայրենի հաւատը, սովորութիւն-
ները, որով միայն կարող է օրինակ հանգիստնալ քրիստոնեայ
ազգաբնակութեան, մինչ սա «Սիրեցէք զԹշնամիս» խօսքերը եկե-
ղեցում լսելուց և «Քրիստոս յարեաւ» ասելուց յետոյ մի այնպիսի
կատաղութիւն ցոյց տուեց, որ ամօթի և նախատինքի կնիք է
գրօշմում քրիստոնեայ մարդոց ճակատին։

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Այն կռիւը, որ Ֆրանսիական կառավարութիւնը սկսել էր
կաթոլիկ միաբանութիւնների դէմ, յաջողութեամբ վերջանալու
վրայ է։ Կառավարութիւնը բոլոր միաբանութիւնները բաժանել
էր երեք կարգի՝ դպրոցական, քարոզչական, արգիւնաբերական
կամ վաճառականական։ Իւր բոլոր հաշիւներն առաջինների
հետ վերջացնելով, Կոմբի նախարարութիւնը այժմ ձեռք է
առել վերջին երեքոցը։ Այս կարգի այն բազմաթիւ խնդի-
րները, որով նա խնդրում էր իր իրաւական գոյութիւնը ճա-
նաչել, գատկից առաջ պալատի նիստերում, չնայելով կղե-
րականների բուռն բողոքներին, բացարձակապէս մերժուեցան։
Ֆրանսիական լրագրները լի են այնպիսի բազմակողմանի տե-
ղեկութիւններով, որոնց նայելով այդ կարգի սուրբ հարց